Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի մարզային փուլ
9-րդ դասարան (120 րոպե)

№ 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Վիճակահանությամբ ո՞վ փոխարինեց Հուդա Իսկարիովտացուն:

1) Պողոսը *(0,5 միավոր)*
2) Պետրոսը
3) Մատաթիան
4) Փիլիպպոսը

2. Ո՞րտեղ տեղի ունեցավ Հիսուսի խաչելությունը:

1) Գողգոթայում *(0.5 միավոր)*
2) Ձիթենյաց լեռան վրա
3) Սինա լեռան վրա
4) Գեթսեմանիի պարտեզում

3. Քանի՞ նվիրապետական աստիճան ունի Հայ Առաքելական Եկեղեցին:

1) 7 *(0,5 միավոր)*
2) 9
3) 10
4) 12

4 . Ո՞ր առաքյալներն էին Քրիստոսի հետ Պայծառակերպության ժամանակ:

1) Հովհաննես, Թադեոս, Պետրոս *(0,5 միավոր)*
2) Անդրեաս, Հուդա Իսկարիովտացի, Պետրոս
3) Թադոս, Պետրոս, Հակոբոս
4) Հովհաննես, Հակոբոս, Պետրոս

5. Ո՞րտեղ է թաղվել Սբ. Արիստակես Հայրապետը:

1) Բագրևանդում *(0,5 միավոր)*
2) Վաղարշապատում
3) Թիլ ավանում
4) Թորդան ավանում

6. Ո՞վ է հրատարակել «Ազդարար» պարբերականը:

1) Հարություն քահանա Շմավոնյանը *(0,5 միավոր)*

2) Ղուկաս Կարնեցին

3) Հովսեփ արքեպ. Արղության-Երկայնաբազուկը

4) Շահամիր Շահամիրյանը

7. Ո՞մ ջանքերով է Երևանում ստեղծվում 1000 հոգուց բաղկացած զորամաս 1827թ.:

1) Եփրեմ Ա Զորագեղցու *(0,5 միավոր)*

2) Ներսես Աշտարակեցու

3) Հովհաննես Ը Կարբեցի

4) Դանիել Ա Սուրմառեցի

8.Ո՞վ է Հայոց կաթողիկոս հաստատում Մատթեոս արքեպիսկոպոսին:

1) Մայր Աթոռի միաբանությունը *(0.5 միավոր)*

2) Ազգային եկեղեցական ժողովը

3) Հայոց եկեղեցու թեմերի առաջնորդները

4) Ալեքսանդր Բ ցարը

№ 9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. Սբ. Ծննդյան տոնին մատուցվող Սբ. Պատարագից հետո կատարվում է _____ արարողությունը: *(1 միավոր)*

10. 303 թ. հունվարի 6-ին _____ լեռան մոտ՝ Արածանի գետում, Ս. Գրիգոր Լուսավորիչը մկրտում է թագավորական ընտանիքի և ավագանու անդամներին, զորականների և բազմահազար նորադարձ քրիստոնյաների: *(1 միավոր)*

11. Սրբերի և նահատակների կյանքը և գործը ներկայացնող ժողովածուներ ու գրքեր թարգմանելու համար Գրիգոր Բ Կաթողիկոսն արժանացել է _____ անվանը: *(1 միավոր)*

12. Գանձասարի վանքի մասին առաջին տեղեկությունը հայտնել է _____ կաթողիկոսը: *(1 միավոր)*

№ 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Եկեղեցիների ու վանքերի անունները համապատասխանեցրեք իրենց գտնվելու վայրերին. *(0,25 X 4 = 1 միավոր)*

1. Նարեկավանք
2. Սբ. Փրկիչ եկեղեցի
3. Տաթևի վանական համալիր
4. Սբ. Խաչ եկեղեցի

ա) Աղթամար
բ) Անի
գ) Կարս
դ) Ռշտունյաց գավառ
ե) Սյունիք

1	
2	
3	
4	

14. Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին. *(0,25 X 4 = 1 միավոր)*

1. «Պոլոժենիայի» հաստատումը
2. Գանձասարի կաթողիկոսության վերացվումը
3. Սկյուտարի ճեմարանի հիմնումը
4. Գևորգյան ճեմարանի հիմնվումը

ա) 1838 թ.
բ) 1824 թ.
գ) 1836 թ
դ) 1874 թ
ե)1815 թ.

1	
2	
3	
4	

№ 15-16

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 5 փաստից

15. Նշված իրադարցությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ. *(1 միավոր)*

ա) Ներսես Աշտարակեցու նշանակումը Բեսարաբիայի թեմի առաջնորդ:
բ) Եփրեմ Ա Ջորագեղցին հյուրընկալվելը Աեքսանդր Ա ցարի կողնից
գ) Աղթամարի կաթողիկոսություն վերացումը
դ) Նիկոլայ Ա-ի ժամանումը Հայաստան
ե) Սինոդի ստեղծումը Հայոց Եկեղեցում

1	
2	
3	
4	
5	

16. Հայոց կաթողիկոսների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության. *(1 միավոր)*

ա) Մովսես Գ Տաթևացի
բ) Հակոբ Դ Ջուղայեցի
գ) Մկրտիչ Ա Խրիմյան
դ) Կիրակոս Ա Վիրապեցի
ե) Ներսես Ե Աշտարակեցի

1	
2	
3	
4	
5	

№ 17

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

17. «Նրա հիմնադրման թվականը ստույգ հայտնի չէ, բայց հավանական է, որ հիմնադրվել է 1280-ական թվականներին: Համալսարանը գտնվում էր Վայոց ձորի գավառում: Այն միջնադարում հայտնի է եղել իբրև«Նոր Աթենք»,«մայրաքաղաք իմաստունների» և այլն»:

1) Ո՞ր համալսարանի մասին է խոսքը: *(1 միավոր)*

_____

2) Ո՞մ ջանքերով է հիմնադրվել այն: *(1 միավոր)*

_____

№ 18-19

Տերմինների, հասկացությունների, պատմահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ. *(1 x 2 = 2 միավոր)*

1) Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսը անսպասելիորեն մահացավ 1680 թ. սեպտեմբերին:
2) Հակոբ Դ Ջուղայեցին Ամենայն Հայոց կաթողիկոս է ընտրվում 1654 թ.:
3) Հակոբ Դ Ջուղայեցին 1677 թ. Սբ. Էջմիածնում հրավիրում էգաղտնի ժողով:
4) Հակոբ Դ Ջուղայեցու պատվիրակությունը Կ. Պոլսում մնաց մինչև 1680 թ.:
5) 1682 թ. դեկտեմբերին հայկական պատվիրակությունը Հակոբ Ջուղայեցու գլխավորությամբ ժամանում է Կ. Պոլիս՝ Եվրոպա մեկնելու համար:

19. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ. *(1 X 2 = 2 միավոր)*

1) Հակոբ Բ Անավարզեցի կաթողիկոսը հատուկ կոնդակով միարարներին արգելեց լատինական ծեսով կատարել պատարագ, մկրտություն, հայերին դարձնել հռոմեադավան:
2) 1361 թ. Մեսրոպ Ա Արտազեցի կաթողիկոսը Սսում ժողով հրավիրեց, որը չեղյալ է հայտարարում Սսի և Ադանայի ժողովների ընդունած որոշումները:
3) Պողոս Ա Սսեցի կաթողիկոսը 1376 թ. կարողանում է ազատավել գերությունից և վերադառնալ Սիս:
4) 1448 թ. Սսում հրավիրվում է եկեղեցական ժողով, որտեղ կաթողիկոս է հռչակվում Կարապետ Եվդոկացին:
5) 1293 թ. եգիպտական զորքերը գրավեցին ու ավերեցին Հռոմկլան:

№ 20

Շարադրանք

(2 միավոր)

Ներկայացրեք Ներսես Աշտարակեցու գործունեությունը որպես Հայոց կաթողիկոս: